

Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ք

Այս ֆերբուսածը, առնուած է նորատիպ հատո-
րէն («Ազգային Վեճակ») բանաստեղծ Արամա-
յիս Սրապեանի, իբր նմոյշ իր բանաստեղծութեան
եւ իբր ոգեկոչում՝ Ս. Վարդանանց յիշատակին:
Այս հատորին մասին մեր ներկայ թիւին մէջ
հրատարակուած է պատշաճ գրախօսական մը:

ԽՄԲ.

Վաղն առաւօտ, ամէն ոք Շաւարշանա՛յ դաշտին մէջ,
Պիտի զըրահն իր հագնի եւ առնէ տէգը խըրոխտ,
Մինչ մենաճիւ նրժոյցներն իրենց կուրծքերն անյողդողդ
Մըղեն անհաշտ Տղմուտի ալիքներո՛ւն դէմ անպէրջ:

Պիտի լսուի կանչը վէս շնորհներուն դուպարի,
Ու փողփողեն զըրօշներն արշալոյսին ծոցին բարկ,
Շարժին վաշտերը ամէն իրարու կից, շարք առ շարք,
Ինչպէս բուքին սաստին տակ արթնցող ծո՛ւլ ամեհի:

Ամէն սրտի պիտ՝ խօսի Աստուծոյ ձա՛յնն անքնին,
Ամէն բազկի մէջ եռայ ցեղին արիւնն անբաւառ,
Յառաջացող դուռներուն վերեւ ճախրեն սիւսաբար՝
Ոսկեճապուռ քուպիճներն երկնաբաղձ հա՛յ հաւատքին:

Պիտի նախճիրը տեւէ մինչեւ հասնի ցայլն ոսկեայ,
Ամէն անկեալ պիտ՝ ըլլայ ազգին մէկ սիւնն անսասան,
Ամէն վերքէ բողբոջեն մանիշակներ եւ շուշան,
Ի դէմ երկնի մէջ փթթող ջինջ աստղերուն շախիւղայ:

Մատենան գունդին դէմ ելլէ Մամիկոնեա՛նն երկնառաք,
Քաջերն ամէն, սուրբերու այս ամբուռոյցքը ահեղ,
Լսուի յորդորն ու պատուէր Դեռնդ Երցին աչազեղ,
Աջն որուն վեհ դէպի փառք կ'ուղղէ հայ զօրքը դիտակ:

Անհաւատար խաղմին մէջ իյնան Վարդանն ու Արսէն,
Սորխոռունին կորովի եւ Դիմաքսեանն իմաստուն,
Կարաւանները փրթին եւ աշտէներն հաստաբուն,
Իյնան մարմինն վըրայ յաղթ Ազատներո՛ւն տարօրէն:

Բայց, մութին մէջ կը հսկէ ոսկեղէնիկ սիրտն հըզօր,
Անպարագիր Եղիշէն, որուն զըրիջն հողեղմայլ
Երգէ այս մահն իմացեալ, դայն պճնելով շողափայլ
Երկնահօլով կենցաղի դափնիներով հեշտօրօր:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՅ ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐ

(Շար. բազմ. 1953. թիւ 11-12, էջ 228)

ԳԼՈՒԽ Ե.

Բանակցութիւն Գաղղիոյ հետ — Սուլֆե-
րինոյի նախադրում վրայ — Կը պահանջէ
Կիլիկիոյ գահը:

17. — Լեւոնի թաղերգութեան վա-
րդոյրը կը փոխուի 1859-ի մէջ: Յուն-
ուար 26-ին Արքահօր կ'իմացնէ՝ թէ տե-
սակցութիւն մ'ունենցեր է Շամբորդի կոմ-
սին հետ, եղբայր յիշեալ դքսուհին, եւ
պետական կարեւոր անձ, բնականաբար
իր քաղաքական ծրագրերէն մասին. եւ
կ'ըսէ. «Թերեւս պիտի կատարենք կըրկ-
նակ դաշնակցութիւն մը»: Ի՞նչպէս շու-
տով կ'եղրակացնէր: Փետրուար 6-ին վե-
րստին կը դրէ, առաջարկելով ներկայա-
ցրեն Արքահօր յիշեալ կոմսը, որպէսզի
վկայ ըլլայ դործի մը՝ որ խնդրոյ նիւթ
էր. եւ որու մասին խօսելու համար՝ կը
հայցէ յղել իրեն ծանօթ միաբան մը: Պըն-
դերն ու արդիւնքը յայտնի չեն, բայց ո-
րոշ է՝ որ սկսած էր դիւանագիտական իր
յարաբերութիւնները Գաղղիոյ կառավա-
րութեան հետ: Այդ նամակներուն մէջ իր
հասցէն է՝ Հրպր. Ս. Մաւրիտիոս, Պա-
լատ Շրէօկինդէր. կը ջանար միշտ իրեն
վայել բնակարան մ'ունենալ:

Նախորդ նամակին մէջ կու տայ նաեւ
Ռուսիոյ հետ իր յարաբերութիւններուն
բարեօրոշման աւետիսը: Նոյն պետութեան
նամակ մ'էր ստացեր Հիւրմիւղեան հաս-
ցէին. եւ «Դուք ինքնին տեսաք, կ'ըսէ,
որ Ռուսիա կը ճանչնայ ու ճանչցաւ միշտ
թէ՛ իմ բարձր աստիճանս եւ թէ՛ ծնուն-
դը»:

Ապրիլ 17-ին կը դառնայ դրել նոյն Ար-

քահօր. «Ես պիտի ըսեմ ի դիտութիւն ձե-
զի՛ նաեւ թէ Ես այսուհետեւ հակառակ
չեմ Ռուսիոյ, ոչ ուղղակի եւ ոչ անուղ-
ղակի. այլ մանաւանդ սրտադին ձեռք կը
կարկառեմ այժմ անոր. վասնզի Աղեք-
սանդրի թաղաւորութիւնը նոյն չէ Նիկո-
ղայոսին հետ. եւ կը յուսամ մօտեւս ու-
նենալ արդարապէս արդիւնքն իմ փորձին՝
զոր կատարեցի այդ նկատմամբ». —
յոյս՝ որ սակայն սահմանուած էր միշտ
յոյս մնալու: Եւ կը յաւելու՝ թէ քիչ ա-
տենէն կը մեկնի Վենետիկէն:

1859 տարին միանգամայն սկիզբն է Ի-
տալիոյ ազատութեան ու մեծութեան:
Յունուարին կնքուած դաշինքը՝ Փիէմոն-
թէի եւ Նափոլէոն Գ.ի միջեւ, Ապրիլի
վերջը ծայր տուաւ պատերազմին՝ որ
պիտի ազատագրէր Լոմպարտիան Աւրս-
տրիոյ լուծէն եւ պիտի կցէր Փիէմոնթէի
դահուն: Գեղեցիկ առիթ մ'էր մեր իշխա-
նին համար՝ փորձելու իր բախտը: Արդէն
քիչ թէ շատ մօտեցած Գաղղիոյ, զնաց
մտաւ Նափոլէոնի բանակին մէջ: Պատե-
րազմը երկու ամիս տեւեց. իսկ թէ ի՞նչ ա-
ռանձին քաջութիւններ գործեց հոն Լե-
ւոն՝ չենք գիտեր: Բայց պարծանքն ստա-
ցաւ Յունիս 24-ին վերաւորելու Սուլֆերի-
նոյի յաղթական ճակատամարտին մէջ, իր
ասպնջական Իտալիոյ ազատութեան հա-
մար, «Կարծելով այդպէս տեսնել՝ դեռ
չմեռած՝ իր հայրենիքն ալ», կը խորհըր-
դածէ իր պաշտպանը(1): Իսկ Միլանի
քաղաքապետութեան վկայագիրը կը ճշտէ
նաեւ անոր դերը պատերազմին մէջ. «Լե-

(1) Ճշմ. 8.

ուն Լուսինեան 1859-ին, վառուած հայրենասիրական զգացումներով՝ խնդրեց եւ ընդունեցաւ իբր առաջին օժանդակ Գաղղիոյ բանակի պետին (կայսեր) սպայակոյտին: Մասնակցեցաւ Սուլֆերինոյի փառաւոր ճակատամարտին, ուր վիրաւորուեցաւ»(2)։ Եւ կը հրամայէր «Թուրքոյ» կոչուած զօրադուներին(3)։ Ականատես վկայ մըն ալ կը գրէր իր մասին. «Ես դայն կը տեսնեմ վերստին հրացանաձիգ զաղթականներու համադրեալներն տակ, հրաբոց աչքեր եւ զօրեղ զլուխ մը»(4) բարձրահասակ եւ հրամանատարութեան համար կերտուած մարմնի մը վրայ(5)։

Հետեւանքն այդ պանծալի մասնակցութեան։ «Սուլֆերինոյի պատերազմին մէջ շահեցայ, կը գրէ ինքնին, Իտալիոյ չքանչանք. միշտ բան մըն է այս» (6 Դեկտ.)։ Աւելին ալ շահեցաւ. գնդակ մը՝ որ խորտակեց իր ձախ բազուկը. ինկաւ ձիէն, կոտորեց սրունքն ալ, եւ մնաց միշտ թեթեւալէս կաղ, ինչպէս կը տեղեկացնէ Պոցցի(6)։ Զօրապետ մը որ կը վիրաւորուի եւ պակասաւոր անգամ կը մնայ, անշուշտ իրաւունք կ'ունենայ կենսաթոշակի մ'ալ, որու մասին սակայն չեն խորհիր ո'չ Գաղղիա եւ ո'չ Իտալիա։ Եւ Միլանի յիշեալ վկայագիրը կը շարունակէ. «Պատերազմը աւարտելուն՝ նա ընտելութիւն հաստատեց Միլանի մէջ, ուր ապրեցաւ 500 Փր. ամսաթոշակով, զոր կ'ընդունէր սեղանաւորէ մը, եւ որ էր շահը ի նպաստ իրեն հայերէ կատարուած հանգանակութեան մը»։ Բայց օր մը այդ սեղանաւորն ալ կը սնանկանայ, եւ ինք «հարկադրեցաւ դիմել հասարակաց օգնութեան»։ Ե՞րբ հասաւ այդ կէտին, չենք գիտեր, բայց աւելի ուշ. վկայութիւնը 1876-էն է։

Դառնալով մեր տարւոյն, որու մասին կը խօսինք, Սեպտ. 1-ին Լուսինեանը կը գրէ առ Հ. Դ. Ալիշան ի Փարիզ, խնդրե-

լով որ յղէ իրեն օրինակ մը հետեւեալ զաղղիներէն աշխատութեան. «Պատմութիւն, վարդապետութիւն, աւանդութիւն եւ պաշտօն արեւելեան հայ եկեղեցւոյ»։ Կը յարէ թէ շատ կարեւոր է իրեն այդ գիրքը, «ըստ որում ի մօտոյ կ'ուզեմ հրատարակել, կ'ըսէ, իմ գործերս այս տիտղոսին ներքեւ. Պատմական դիտողութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ վրայ»։ Հաւանօրէն ստացաւ խնդրած գիրքը. բայց ինչ եղաւ իր ծրարած կամ պատրաստած աշխատութիւնը, չենք գիտեր։

Լեւոն Դեկտ. 6-ին ալ ձենովայէն կը գրէր առ Գերայ. Հիւրմիւղեան, ակնարկելով ուրիշ հնարադիտութեան մը՝ որուն ձեռնարկեր էր պատերազմի շրջանին։ «Ես ստիպուած եմ, կ'ըսէր, յիշեցնել վերստին Ն. Կ. Բ. Տիկին մեծ գրութիւն Ռուսիոյ՝ Մարիամի, թէ խոստումը՝ որ տրուեցաւ առ Եւդինէ կայսրուհին, այն ատեն (պատերազմի շրջանին) վարիչ Գաղղիոյ, հատուցանելու ինձ թոշակը՝ խոստացուած 12 տարիէ ի վեր, եւ նորոգուած երեք ամիս առաջ, անդործ մնացած է», եւ թէ իր բարեկամը Աղ. Թրուպեցքոյ յօժար է խօսելու այդ մասին մեծ Դքսուհիին։

Սա ոտձկի խնդրին մէջ գիտելի է՝ թէ խոստումն եւ անգործադրութիւնը ինչպէս իրարու կ'ընկերեն միշտ։ Երկու տեսակ կայսրութիւն կար Ռուսիոյ մէջ, անուանական եւ իրական, կամ՝ սահմանող ու կատարող, որոնք իրարմէ անկախ էին. առաջինը կ'որոշէր, իսկ երկրորդն ազատ էր կատարելու դայն կամ ոչ։ Նիկողայոս կը սահմանէ Լեւոնի թոշակը, եւ կը հաղորդէ Պետերբուրգի կառավարիչին, նամակով (հ. 6)։ Բայց պատերազմական նախարարը Զեռնիչեն ու հայազգին Արդութեան հակառակ են Լուսինեանին(7), եւ հատուցումը կը խափանեն։ Ունի սա իր բարեկամներն ալ, ինչպէս Աղ. Ու-

լով(8) եւ Աղ. Գորչապով իշխանները, որ դատին պաշտպան են. նոյնպէս այնչափ ներքին եւ արտաքին մեծամեծ անձերու միջնորդութիւնը, որոնք ապարդիւն չէին կարող մնալ կայսեր քով, եւ զիջողութեան լուրեր երբեմն կը հասնէին իրեն, արծարծելով իր յոյսը. բայց հակառակ հոսանքը կը քանդէր ամէն ինչ։ Այդ հակասական քաղաքականութեան ճշգրիտ թարգմանն էր Հոռմի դեսպանը՝ Կիսսելեւ, որ Անթոնելի Կարդինալին բարեխօսութեան իբր պատասխան կ'ըսէր՝ թէ Ռուսիա Հայոց իշխանը կը համարի մեռեալ, եւ «ցորչափ չիմի մէջ է, ես ոչինչ կարող եմ ընել դժբախտ իշխանին համար. բայց Աղեքսանդր կայսրը կրնայ անոր իրաւունքը պաշտպանել»(9)։ Կայսեր համար կենդանի, տէրութեան համար մեռեալ. առաջին պարագային՝ անուանապէս, եւ երկրորդին՝ իրապէս։ Այս էր ցարական Ռուսիոյ վարչական ձեւը, որուն զոհն էր Լեւոն՝ Հայոց իշխանը։

18. — Լեւոն հաստատուած է Միլանի մէջ, բայց հայակեղորոն վենետիկն ալ կը քաշէ զինքը. եւ 1860-ի Յունուարին կը հասնի հոն։ Աղբիականի ոստանը տակաւին Աւստրիոյ լուծին ներքեւ կը գտնուի. եւ ոստիկանութենէն հրաման կու գայ հեռանալ 24 ժամէն։ Լեւոն կը յաջողի հաճողել ու մնալ դեռ քանի մը օր։ Հրամանը կը կրկնուի եւ ինք կը մեկնի, ըստ նամակին զոր կը գրէ Գերայ. Աբրահամ (3 Փետրուար)։ Զի խրատուի մտով, կը փորձէ դառնալ ու Զատիկը կատարել նոյն քաղաքին մէջ. բայց այս անգամ իր առջեւ փակ կը գտնէ սահմանադրութիւն իսկ Աւստրիական կառավարութենէն, «Իր պատուոյն վրէժ խնդրելու համար Սուլֆերինոյի մէջ»։ Եւ կը յարէ. «Մեծ ու մեծանձն ըլլանք, ներքեւ այս մանկական

թեթեւութեան ալ» (21 Փետր.)։ Իր հաւածանքի օրերուն՝ մարդասէր ասպնջականութիւն գտնել, ապա զէնք առնել ասպնջականին դէմ՝ ի շահ օտար պետութիւններու, եւ յետոյ պահանջել մտնել ազատօրէն անոր տունը, տարապայման չէ՞ արդեօք մեր երիտասարդ իշխանին կողմէ, եւ չափազանց՝ անոր հանդէպ եղած մեծանձնութիւնը։

Դրամական կարօտութիւնը հետզհետէ աւելի զգալի կը դառնայ, եւ Լեւոն փոխանակ յունահաստելու ոռոսական հարցին ձախողանքներէն, կը փնտռէ նոր հնարքներ։ Նկատելով որ իր հայրը ժամանակին դաշնակից էր Պարսից արքային (հ. 4), փորձեր էր խնդրել անոր միջնորդութիւնը ոռոս կառավարութեան մօտ. եւ այդ նըպատակով դիմած էր նախ Հոռմի պարսիկ դեսպանին։ Արդեւք չտեսնելով, երկրորդ անգամ կը գրէր, Դեկտ. 24-ին, Լոնտոնի պարսիկ դեսպանին, որ քաղաքավարութեամբ կը հասկցնէ՝ թէ չի կրնար իրեն օգտակար ըլլալ(10)։ Եւ տարին կը փակուի Լեւոնի առջեւ այս նոր յոսանքովութեամբ։

19. — Նոր տարւոյն մէջ (1861) կը սկսի աւելի ոյժ տալ իր քաղաքական ծրագրին։ Արդեօք չքաջալերուեցա՞ւ Լիբանանի օրինակէն, որ նախորդ տարին գրտած էր իր անկախութիւնը՝ եւրոպական պետութիւններու որոշումով։ Նահատակ ու վիրաւոր Սուլֆերինոյի մէջ, անձամբ եւ թղթակցութեամբ արդէն ծանօթ՝ օտար տէրութեանց, ժամանակն էր աւելի զօրաւոր ձայն մը բարձրացնելու անոնց ականջներուն՝ ի նպաստ հայկական ազատութեան, որուն հետ սերտօրէն կապուած էր իր անձն ալ՝ իբրեւ զահապահանջ Հայոց։ Որով հարկ էր նախ զգացընել Եւրոպայի այս կէտը, զոր եւ ի դը-

(2) Անդ. 70. (3) Անդ. 67. (4) Ճշմ. 75.

(5) Հաւ. (6) Անդ. (7) Յուն. 12, 15.

(8) Անդ. 15 (հ. 7). (9) Յուն. 19.

(10) Անդ. 9, 16.

լուսի կը հանէ, ինչպէս կը գրէր Գերայ. Եդ. Հիւրմիւզեան՝ թէ «Կորիկոսն հրա- տարակեալ է տետրակ մի գիրականց իւ- րոց ի վերայ Կիլիկիոյ» (19 Ապրիլ), ինչ որ իր դեռած ծրագիրն էր, եւ 1857-ին արդէն յայտնած նոյն արքեպիսկոպոսին (հ. 10): Փորձել մեծ Հայաստանի ազա- տութիւնը Ռուսիոյ ճիրաններէն՝ անկա- րելի էր: Թուրքիա ընդհանրապէս վար- Ժամ էր անդամատուելու, եւ Կիլիկիա նոյն ինքն իր (կարծեցեալ) նախնաց ա- թոռն էր, որով կրնար աւելի համարձակ պահանջել: Այսպիսի յոյսով մը ձեռք զարկաւ այդ հրատարակութեան: Անձ մը՝ որու անունը ծածկած է Վոքս, պատե- րազմի տարին ներկայ եղած էր անոր տե- սակցութիւններուն Նափոլէոնի հետ(11), եւ կ'երեւի քաջալերութիւն դառն կայս- րէն. այնպէս որ խնդիրն անոր պետու- թեան օրակարգին անցած էր՝ 1859-ի ըս- կիզբէն ի վեր, ինչպէս տեսանք (հ. 17): Եւ Հիւրմիւզեան կը յարէ. «Դեսպանն Գաղղիոյ ասաց ցիս աստ՝ զի կամին մեղ- մով իմն բառնալ ի դրանէ (Թուրքիոյ) զԿիլիկիայ»: Խնդրին լրջութիւնը միանգա- մայն հետեւեալ խորհրդածութիւններուն կը մղէ Արքեպիսկոպոսը. «Վասն որոյ լաւ թուի ինձ զգուշութեամբ դնալ ընդ Կորիկոսի, ոչ ընդդէմ եւ ոչ ի նպաստ. զի ապագայ նորին ոչ է յայտ. եւ աստ... ոչ սակաւը յազգէս նպաստաւորը են նը- մին» (13 Ապրիլ):

Եթէ հասուն մարդիկ այդպէս կը խոր- հէին, զարմանք չէ ուրեմն՝ որ Լեւոն իր գիւրահաւատութեամբ մեծագոյն վստա- հութիւն առած՝ սկսէր արդէն սուր շո- ղացնել: Հոկտ. 14-ին պատասխանելով Հիւրմիւզեանի՝ Թուրքիոյ ոստանէն յղած նամակին, ուր գրած էր «Կոստանդնուպո- լիս հայրենիք իմ», կ'ընդվզի ու կ'ըսէ. «Ի ձայն բարձր կը յայտարարեմ՝ որ Թուր-

քիա Ձեր հայրենիքը չէ. ես կ'ըսեմ՝ թէ Ձեր հայրենիք Հայաստանն է»: Իմաստն էր անշուշտ՝ թէ Հայաստան պիտի տանէր Եդուարդ Արքեպիսկոպոսը: Թերեւս այս նամակին կամ յաջորդի մը կ'ակնարկէ նոյն Արքեպիսկոպոսը, երբ Հոկտ. 22-ին գրելով իրեն կ'ըսէ. «Կը կրկնեմ միշտ՝ որ եթէ կը փափաքիք աստուածային օղ- նութեան, հաստատապէս առաջադրելու էք չպահանջել երբեք Ձեր իրաւունքները արեան դնով»: Կը յարէ՝ թէ «Ձեր նախա- հօր սուրբ կը դռնուի իմ ազգականի մը քով(12), որու հասցէն կու տայ: Լեւոն Թադաւորի ծանօթ կեղծ սուրբէն մէկն էր ատիկա»:

Լուսինեանի քաղաքական ծրագրէն ան- մասն չէր անշուշտ հայ լեզուի մէջ ա- ւելի եւս հմտանալու իր ջանքը, զոր կը թափէր: Սեպտ. 26-ին նամակ մ'ունի Մի- լանէն առ Հ. Ղեւոնդ Ալիշան ի Փարիզ, խնդրելով որ անլրէպ գտնէ եւ իրեն յղէ հայ-գաղղիներէն բառարան մը, զոր հրա- տարակած էր Զրպետի աշակերտը՝ Պել- լօդ, եւ զոր գտնելու համար կը յանձնա- րարէր դիմել հայազէտ Ֆլորիւսի: Շնոր- հակալ կ'ըլլայ «փոքրիկ գրքին» համար, զոր ընդունած էր. արդեօք 1859-ին խըն- դրա՞ծն էր (հ. 16), թէ ուրիշ մը...: Եւ կը յարէ. «Ես հոս կը գտնուիմ մարդոց մէջ, որ ինչպէս կ'ըսուի տաք ջուրով կ'ապրին: Ստուգիւ չեմ գիտեր Հրեանե- րու թէ Մահմետականներու մէջ կ'ապ- րիմ. Իտալիա կրօնք չէ մնացած. ոչ բա- րոյական եւ ոչ ուղղամտութիւն: ... Թող Աստուած պահէ իրենց հոգիները»: Իր այս տեսութեան մէջ պէտք է գիտնալ դա- նազանել Ժամանակը կամ շրջանակը՝ ուր կ'ապրէր. վասնզի մեզի ծանօթ Իտալիան շատ տարբեր է իր նկարագրածէն:

20. — Մեր իշխանը ուղեւորով վերջին փորձ մըն ալ կատարել ուստական խըն- դրին լուծման, Սեպտ. 2-ին (1861) եր-

կրորդ աղերսագիր մը կ'առաքէ Աղեք- սանդր Բ. կայսեր, յիշեցնելով հօրը խոս- տացած ոռճիկը, յետոյ անոր զլացումը, իր աղերսագիրն առ հայրն ու մայրը, եւ առ նոյն ինքն Յարը, որոնց հասնելուն կը կատարէ, իբրեւ հակառակորդներէն խո- փանուած: Կայսեր ուշադրութիւնը կը հրաւիրէ հարցին վրայ, յետամնաց գու- մարն ալ խնդրելով, որով «անհաստատ վիճակս, ուր հասած եմ, քիչ մը պիտի ամոքուի եւ բարձրանայ»(13):

Սովորութիւն ունէր վեհապետներու ուղղած իր խնդրագրերները տպագրել եւ այնպէս տալ՝ «գիւրաւ կարդալու հա- մար»(14): Այս անգամ բախտն ունեցաւ պատասխան ստանալու, թէեւ ուշ: Յա- ջորդ տարւոյն Սեպտ. 2-ին կը գրէ Ար- բահօր՝ թէ «Քանի մ'ամիս առաջ նամակ մը ստացայ Ռուսիոյ կայսեր մեծ սենե- կապետէն, Ռիբուպիետ կոմսէն, որով կ'ի- մացնէր՝ թէ ինձ պիտի դարձնէին բոլոր ունեցածներս, որ դրաւուած էին 1846ին. բայց աս՝ խոստում մը, եւ բոլորն այդ- չափ է»: Իր փորձառութիւնը զինք չէր խաբեր, եւ անցած «քանի մ'ամիսը» իրեն իրաւունք տուած էր արդէն, ու կայսե- րական անկարողութիւնը վերստին յայտ- նաբերած (հ. 17):

Լեւոն իր քաղաքական դիրքը բաւական ամրացած գտնուի, ուղեց վրէժխնդրու- թեան անցնիլ Ռուսիոյ եւ Բրուսիոյ դէմ (հ. 8): Հաւաքեց ուստական խնդրին վե- րաբերող վաւերագրութիւնը, եւ անոնց

մասին «Նախագարդ ճառով» կամ ընդհա- նուր տեղեկութեամբ մը հանդերձ ի լոյս ընծայեց, որպէսզի աշխարհ ճանչնար իր դէմ դործուած անիրաւութիւնը, եւ իր անձը աւելի ընդարձակօրէն ծանօթանար եւրոպացիներուն: «Հայ ազգը, կ'ըսէ, ստիպմամբ աղերսեց Իշխանէն տպագրու- թեան տալ այս բոլոր վաւերագրութիւնը՝ հրատարակելու համար, եւ Հայոց Իշխա- նը զիջաւ անոնց փափաքին»(15): Հիւր- միւզեան այդ առիթով կը գրէր իրեն Պոլ- սէն (22 Հոկտ.) թէ «Անհամբեր կը սպա- սեմ տպագրուած վաւերագրութիւնն, ո- րոնց նոյնպէս կը բաղձան մեր ազգային- ներէն շատեր»(16). ասոնք Հոկտեմբերին ընդ մամլով էին, ըստ Լեւոնի (14 Հոկ- տեմբեր): Բայց Գերայ. Եդուարդ զանոնք կարգաց Հոռմ վերադառնալէն վերջ, ըն- դունելով Փլորենտիայէն, ուր էր Լեւոն (21 Նոյեմբ.), կ'երեւի իր դիւանագիտա- կան նպատակներով: Յիշեալ տպագրու- թիւնը կատարուած է Միլան, վերստին հրատարակուած է գերմանական խնդրին հետ՝ մեզի ծանօթ Յուշարար-ին մէջ (հ. 1), յար եւ նման իրարու անունով եւ բո- վանդակութեամբ: Բայց 1861-ի տպա- գրութիւնն ալ «նոր ու ճոխացած էր». ապացոյց՝ որ ատկէ առաջ եւ նոյն տար- ւոյն մէջ տպուած էր աւելի համառօտը Աղեքսանդրին զրկելու համար:

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

(13) Յուլ. 5, ձեմ. 53. (14) Յուլ. 17.

(15) Անդ. 19. (16) ձեմ. 54.

(11) ձեմ. 75. (12) Անդ. 54.